

## **ՎԵՐԻՆ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՇՆՉՈՒՂԻՆՆԵՐԻ ԶԱՄԱԿՑՎԱԾ ՆՈՉՈԿՈՄԻԱԸ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐԸ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՈՒՄ**

**Շուքուրյան Ա.Կ., Նահապետյան Ն.Ռ., Ազնաուրյան Վ.Ա., Պողոսյան Կ.Ս.,  
Մկրտչյան Ս.Ա.**

*Երևանի Մ. Զեքուցու անվ. պետական բժշկական համալսարանի քիթ, կոկորդ,  
ականջաքանության ամբիոն, Երևան, Հայաստան*

Նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքում նոզոկոմիալ ինֆեկցիաների ավելի հաճախ հանդիպող կլինիկական ձևերից են՝ շնչառական ուղիների վերին և ստորին հատվածների ինֆեկցիաները: Աշխատանքում վերլուծության է ենթարկվել նորածինների ինտենսիվ թերապիայի բաժանմունքում բուժված 0-35 օրեկան 740 նորածինների հիվանդության պատմագրերը: Ստացված տվյալները վկայում են, որ հաճախակի միաժամանակ են ինֆեկցված լինում վերին և ստորին շնչուղիները:

Քիթ, կոկորդ, ականջ օրգանների ինֆեկցիաների և թոքաբորբի համակցման դեպքում հաճախ հայտնաբերվել է խառը միկրոֆլորա: Առաջարկվել է համակցված պաթոլոգիայի դեպքում, կանխարգելիչ և հակամիկրոբային թերապիայի նպատակով օգտագործել ցեֆալոսպորինի շարքի երկրորդ սերնդի հակաբիոտիկներ: